ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«05» հունիսի 2017 թվական N 77-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ մասերով և հիմք ընդունելով Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի կողմից կառուցապատման նպատակով առանձնացված հողամասերի օգտագործման սխեմաները և ներկայացված ելակետային տվյալները՝ **Գյումրի համայնքի ավագանին որոշում է.** Գյումրի համայնքի սեփականությունը հանդիսացող, կառուցապատման նպատակով առանձնացված հողամասերն օտարել աճուրդով և հաստատել աճուրդի մեկնարկային գներն ու պայմանները՝ համաձայն հավելվածի:

	Կողմ (19)	Դեմ (0)	Ձեռնպահ (1)
Ս. Բալասանյան			Ս.Մարտիրոսյան
Ա. Ադամյան			
Հ. Կարապետյան			
Լ. Խաչատրյան			
Է. Մկրտչյան			
Տ.Հովհաննիսյան			
Մ. Սահակյան			
Լ. Սանոյան			
Վ. Եդիգարյան			
Ա. Գրիգորյան			

Վ. Հունանյան _____

Գ. Սարգսյան _____

Կ. Միքայելյան _____

Տ. Փանոսյան _____

Գ. Գրիգորյան _____

Կ. Թաթարյան _____

Ա. Տոնոյան _____

Հ. Եղիազարյան _____

Հ. Պողոսյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

ք.Գյումրի
«05» հունիսի 2017 թ.

Հավելված՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Գյումրի համայնքի ավագանու
2017 թվականի հունիսի 05-ի N 77-Ն որոշման

Ց Ո Ւ Ց Ա Կ

Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող, առանձնացված հողամասերն աճուրդով օտարելու մեկնարկային գների և պայմանների

Հ/Հ	Հողամասի հասցեն /գտնվելու վայրը/	Ծածկագիրը մակերեսը քառ.մ	Հողամասի նպատակային և գործառական նշանակությունը	Հողամասի օգտագործման նպատակը	Հաստատված մեկնարկային գինը /ՀՀ դրամ/
1.	Խրիմյան Հայրիկի փող. N 49/1 9-րդ գոտի	08-001-1321-0068 63.0	Բնակավայրերի հասարակական կառուցապատում	Սպասարկման օբյեկտի կառուցում	630 000
2.	Մուշ-2 թաղ. 9-րդ փող. N 11/1 11-րդ գոտի	08-001-0128-0018 65.28	Բնակավայրերի բնակելի կառուցապատում	Ավտոտնակի կառուցում	90 000

Քաղաքաշինության և
ճարտարապետության բաժնի պետ՝ Ա.Հակոբյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«05» հունիսի 2017 թվական N 78-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ՏԻԳՐԱՆ ՓԱՆՈՍՅԱՆԻՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՎԱԶԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ ՓՈՂՈՑ N 26/7 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի համայնքի ղեկավարի 2016 թվականի մարտի 22-ի N 432-Ա որոշմամբ քաղաքացի Տիգրան Փանոսյանին ապասարկման օբյեկտ կառուցելու նպատակով, 5 (հինգ) տարի ժամկետով (տարեկան վարձավճար 84 000 (ութսունչորս հազար) Հայաստանի Հանրապետության դրամ), կառուցապատման իրավունքով տրամադրվել է Վազգեն Սարգսյան փողոց N 26/7 հասցեի 0.110438 (զրո ամբողջ մեկ հարյուր տաս հազար չորս հարյուր երեսունութ միլիոներորդական) հեկտար մակերեսով հողամասը, որը ենթարկվել է պետական գրանցման:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրեսգրքի 74-րդ հոդվածի, 76-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի դրույթներով, հիմք ընդունելով քաղաքացի Տիգրան Փանոսյանի դիմումը՝ (համայնքապետարանում մուտքագրված՝ 2017 թվականի ապրիլի 25-ին N 7109 թվագրմամբ)՝ **Գյումրի համայնքի ավագանին որոշում է՝**

1. Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող, քաղաքացի Տիգրան Բյուզանդի Փանոսյանին կառուցապատման իրավունքով տրամադրված Վազգեն Սարգսյան փողոց N 26/7 հասցեի 0.110438 (զրո ամբողջ մեկ հարյուր տաս հազար չորս հարյուր երեսունութ միլիոներորդական) հեկտար մակերեսով, (տարեկան վարձավճար 84000 (ութսունչորս հազար) Հայաստանի Հանրապետության դրամ) բնակավայրերի նպատակային նշանակության, ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության հողամասի կառուցապատման իրավունքով տրամադրելու ժամկետը երկարաձգել 50 (հիսուն) տարի ժամկետով:

	Կողմ (19)	Դեմ (0)	Ձեռնպահ(0)
Ս. Բալասանյան			
Ա. Ադամյան			

Հ. Կարապետյան _____

Լ. Խաչատրյան _____

Է. Մկրտչյան _____

Տ.Հովհաննիսյան _____

Մ. Սահակյան _____

Լ. Սանոյան _____

Վ. Եդիգարյան _____

Ա. Գրիգորյան _____

Վ. Հունանյան _____

Գ. Սարգսյան _____

Կ. Միքայելյան _____

Գ. Գրիգորյան _____

Կ. Թաթարյան _____

Ա. Տոնոյան _____

Ս. Մարտիրոսյան _____

Հ. Եղիազարյան _____

Հ. Պողոսյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ **Ա. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

ք.Գյումրի
«05» հունիսի 2017 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«05» հունիսի 2017 թվական N 79-Ա

«ԷԼԵԿՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ «ԳՅՈՒՄՐԻ-ԷԼԵԿՏՐՈՆ» ԴՈՒՍՏՐ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅԱՆԸ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՐԾԱՐԱՆԱՅԻՆ ՓՈՂՈՑ N 2Ա ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՆՐԱԿԱՑԱՐԱՆԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ՝ ՀԱՆՐԱԿԱՑԱՐԱՆԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ 1432,0 (ՄԵԿ ՀԱԶԱՐ ՉՈՐՍ ՀԱՐՅՈՒՐ ԵՐԵՍՈՒՆ ԵՐԿՈՒ) ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության հյուսիսային քաղաքացիական դատարանի 2008 թվականի սեպտեմբերի 10-ի վճռով (քաղաքացիական գործ թիվ՝ ՀՅՔԴ 6/0507/04/08) «Էլեկտրոն» փակ բաժնետիրական ընկերության «Գյումրի-Էլեկտրոն» դուստր ձեռնարկությունը ճանաչվել է սնանկ:

Սնանկության գործի նյութերի ուսումնասիրությունից պարզվել է, որ Գործարանային փողոց N 2ա հասցեով հանրակացարանը հանդիսանում է «Էլեկտրոն» փակ բաժնետիրական ընկերության «Գյումրի-Էլեկտրոն» դուստր ձեռնարկության սեփականությունը, որը կառուցվել է մինչև Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի ուժի մեջ մտնելը:

Նշված գույքի հողհատկացման փաստաթղթերը չեն պահպանվել (հիմք՝ Հայաստանի Հանրապետության ազգային արխիվի Շիրակի մարզային մասնաճյուղի 2013 թվականի փետրվարի 13-ի թիվ Ս-196 արխիվային տեղեկանք):

Սնանկության գործերով կառավարիչ Կարեն Ախոյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին հանրակացարանի հողհատկացման հիմքերը վերականգնելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 118-րդ հոդվածի 4-րդ և 6-րդ մասերով, «Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2005 թվականի հոկտեմբերի 4-ին ընդունված օրենքի 23-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետով և 2-րդ կետով ու հիմք ընդունելով սնանկության գործերով կառավարիչ Կարեն Ախոյանի գրությունը (մուտքագրված համայնքապետարանում 2017 թվականի մայիսի 24-ի N 8301 թվագրմամբ)՝ **Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

Վերականգնել «Էլեկտրոն» փակ բաժնետիրական ընկերության «Գյումրի-Էլեկտրոն» դուստր ձեռնարկությանը պատկանող Գործարանային փողոց N 2ա հասցեում գտնվող հանրակացարանի պահպանման և սպասարկման համար փաստացի զբաղեցրած 1432,0 (մեկ հազար չորս հարյուր երեսուներկու) քառակուսի մետր մակերեսով հողամասի հողհատկացման հիմքերը և այդ հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը փոխանցել «Էլեկտրոն» փակ բաժնետիրական ընկերության «Գյումրի-Էլեկտրոն» դուստր ձեռնարկությանը:

Կողմ (19)	**Դեմ (0)**	**Ձեռնպահ (1)**
Ս. Բալասանյան		Ս.Մարտիրոսյան
Ա. Ադամյան		

Հ. Կարապետյան _____

Լ. Խաչատրյան _____

Է. Մկրտչյան _____

Տ.Հովհաննիսյան _____

Մ. Սահակյան _____

Լ. Սանոյան _____

Վ. Եդիգարյան _____

Ա. Գրիգորյան _____

Վ. Հունանյան _____

Գ. Սարգսյան _____

Կ. Միքայելյան _____

Տ. Փանոսյան _____

Գ. Գրիգորյան _____

Կ. Թաթարյան _____

Ա. Տոնոյան _____

Հ. Եղիազարյան _____

Հ. Պողոսյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ **Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

ք.Գյումրի
«05» հունիսի 2017 թ.